

ԱՐԱ ԵՐՆՁԱԿՅԱՆ

ՀՈՐԱՑԻՈՅԻ ԿԵՐՊԱՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՔՈՐՈՍԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. Շեքսպիրի «Համլետ» ողբերգության մեջ Հորացիոյի կերպարը, պայմանավորված մի շարք բնութագծերով, կտրուկ տարբերվում է ողբերգության մյուս հերոսներից: Միևնույն ժամանակ կերպարի գործողությունները դերակայանք են բացատրվում, եթե դիտում ենք նրան անտիկ ողբերգության տեսանկյունից: Միայն այդ դեպքում է, որ Հորացիոն ողբերգության ընդհանուր կառույցի մեջ դառնում է տրամաբանված:

Այս կապակցությամբ դիտարկենք հին հունական պարերգչախմբի առանձնահատկությունները:

1. Ի տարբերություն պարերգչախմբի շարքային մասնակիցների (խորտեսների), ովքեր կատարում էին քնարական հատվածները և սակավ էին ուղղակի հարաբերության մեջ մտնում դերասանների հետ, պարերգչախմբի առաջնորդը (կորիֆայոս) հաճախ է առնչվել ողբերգության գործող անձանց հետ¹:

Հորացիոն, որպես մի պարերգչախումբ, բեմում հայտնվում է ավելի վաղ, քան Համլետը և կարծես նախապատրաստում է վերջինիս մուտքը՝ հանդիսականին պատմելով ողբերգության նախընթաց իրադարձությունների մասին.

Հորացիո

...Բայց իմ կարծիքի ընդհանուր հակումն ու սլացքն այն է.

Որ դա գուժում է մի մեծ սասանում մեր պետության մեջ: (1, 1)

Այստեղ և հետայսու Հորացիոն հանդես է գալիս պարերգչախմբի կորիֆայոսի դերով՝ ի տարբերություն Բեռնարդոյի և Մարցելլոսի, որոնց դրամատուրգը, ըստ էության, տվել է պարերգչախմբի դեր: Ավելի ուշ, Ուրվականի հետ հանդիպելուց հետո, Համլետն ինքն է ընդգծում այս հանգամանքը, երբ դառնում է Հորացիոյին և Մարցելլոսին հոգնակի թվով (scholars and soldiers).

Համլետ

¹ Стю Архо В. И., Древнегреческая литература. Трagedия. М., 2000, стр. 107 (այսուհետ՝ մեջբերումների էջերը կնշվեն տեղում):

Այժմ, սիրելի բարեկամներս,
Իբրև բարեկամ, իբրև դասընկեր, իբրև զինակից,

Սի չնչին ազերս շնորհեցեք ինձ: (I, 5)

2. Կորիֆայոսի ռեպլիկները, որ ծավալով առավել փոքր են ներածական մենախոսությունից, տեղակայված են կամ քնակարական ստորոփենների միջև, կամ պարերգական և խոսքային հատվածների հատման կետերում (3, 107):

Հիշենք պիեսի համգույցը.

Հորացիո

Տեր իմ, կարծում եմ, որ երեկ գիշեր ես տեսա նրան:

Համլետ

Տեսա՞ր, ու՞մ:

Հորացիո

Ձեր հորը, տեր իմ, թագավորին: I, 2)

Այնուհետև, Հորացիոն նախազգուշացնում է արքայազնին, որ ուրվականը նրան կարող է հասցնել խելագարության.

Հորացիո

Իսկ եթե նա ձեզ...

հասցնել խելագարությա՞ն: (I, 4)

Հորացիոյի շուրթերից ենք տեղեկանում այն մասին, թե ինչ է պատահել Համլետի հետ Անգլիա հարկադրական ճամփորդության ժամանակ (արքայազնի նամակը): Նա է հենց հաղորդում, որ մատնիչներ Ռոզենկրանցին և Գիլդենշտերնին սպասում է արդար հատուցումը:

Հորացիո

Ուրեմն՝ Գիլդենշտերնն ու Ռոզենկրանցը գնում են հիմա...

(V, 2.)

3. «Կորիֆայոսը որոշ ամփոփիչ հատվածներում եզրափակել է ողբերգությունը» (3, 108): Հորացիոյի ավարտական մենախոսությունը լիովին համապատասխանում է կորիֆայոսի գործառույթին անտիկ ողբերգության մեջ.

Հորացիո

Եվ դուք կլսեք լկտի, արյունռուշտ, հրեշավոր գործեր...

(V, 2)

4. «Կորիֆայոսի ևս մեկ խնդիրը՝ մեկնել գործող անձանց միջև տեղի ունեցող մենախոսությունների կամ ռեպլիկների փոխանակումը» (3, 108):

Հիշենք Հորացիոյի հարցերը, երբ Համլետը պատմում է Էլսինորում տեղի ունեցող խնջույքի մասին:

Հորացիո

Այս ի՞նչ է, տեր իմ:

Համլետ

Արքան այս գիշեր տոն է կատարում և խնջույք ունի:

Կոնծաբանում է և գլտորվելով կայթպար է պարում

եվ երբ լցնում է Հռենոսի գինին իր կոկորդն ի վար,

Թմբուկն ու փողերն այսպես զռում են

Ի պատիվ նրա խմած կենացին:

Հորացիո

Մի՞թե դա մի հին սովորություն է:

Համլետ

Այո, այդպես է... (I, 4)

Սակայն Հորացիոյի հարցերը, եթե հետևենք ընդհանուր մոտեցմանը, անհեթեթ են թվում, քանի որ նա քաջատեղյակ է դանիական սովորույթներին: Միևնույն ժամանակ, Հորացիոյի մեր առաջարկած մեկնաբանության համաձայն, նա «պարտավոր է աջակցել» Համլետին հայտնի երևույթները լուսաբանելու խնդրում:

5. «Պարերգչախումբը սովորաբար կազմվում է ոչ ժողովրդի ինչ-որ վերացական ներկայացուցիչներից, այլ այն դեմքերից, ովքեր բավական սերտ առնչություններ ունեն ողբերգության հերոսների հետ» (3,108):

Պարերգչախումբը «Համլետում» Դանիական թագավորության զինվորներն են (Ֆրանցիսկո, Բեռնարդո, Մարցելլոս): Նրանք վերացական դեմքեր չեն, այլ մարդիկ, ովքեր ուղղակի կապ ունեն իրադարձությունների հետ:

6. «Պարերգչախմբի ընտրությունը բացառում է հերոսներին մեղադրելու հանգամանքը, հերոսներ, որ, իբրև կանոն, զբաղեցնում են առավել բարձր սոցիալական դիրք և պարերգչախմբի հետ կապված են շատ հասկանալի կապերով» (3,109):

Հորացիոն ինքն իրեն ընկալում է իբրև Համլետի ծառա:

Համլետ

Հորացիո՞ն է սա...

Հորացիո

Ինքն է և հավետ ձեր խոնարհ ծառան:

(I, 2)

Սա լիովին համապատասխանում է պարերգչախմբի կարգավիճակին հին հունական ողբերգության մեջ:

Համլետ

Էհե՛յ, Հորացիո:

Հորացիո

Պատրաստ եմ, տեր իմ, ձեր ծառայության: (III, 2)

Այսպիսով ի դեմս Հորացիոյի պարերգչախումբը պատրաստ է ծառայելու իր հերոսին (պրոտագոնիստին), ով, ըստ իր կարգավիճակի (արքայազն), զբաղեցնում է առաջատար դիրք:

7. «Պարերգչախմբի ևս մեկ խնդիրը ողբերգության մեջ կարեկցանք է, գլխավոր հերոսի սերտ կապի անընդմեջ գիտակցումը և իր ու հերոսի ճակատագրի քնարական մեկնությունները՝ դատապարտելու որևէ փորձից հեռու» (3,110):

Ողբերգության մեջ, ի տարբերություն մյուս հերոսների, Հորացիոյին տրված է հատուկ նշանակություն: Նա, ինչպես բազմիցս նշել ենք, «ապրում է աննկատ», բայց հայտնվում է ճիշտ պահին և ճիշտ տեղում:

8. «Պարերգչախումբը ներկայանում է իբրև յուրահատուկ գործող անձ, որի դերը հաճախ հանգեցվում է իրադարձությունների ընթացքի զգացական մեկնության, ոչ դրանցում անմիջական մասնակցության» (3,114):

Կարելի է բերել բազում օրինակներ, երբ Հորացիոյի ներկայությունն ու մեկնություններն այս կամ այն դրվագում ստեղծում են կարևոր զգացական երանգ կատարվող իրադարձությունների թիկունքում:

Հորացիո

Գուցե կես բաժին կտան ձեզ:

Համլետ

Ոչ, մի ամբողջ բաժին...

Հորացիո

Ավելի լավ էր՝ իր հանգով վերջացնեիք:

(III, 2)

Շեքսպիրի «Համլետ» ողբերգության մասին գոյություն ունեցող մեծաքանակ աշխատությունների մեջ հիմնական խոսքը վերաբերում է հետագա ստեղծագործությունների վրա նրա ազդեցությանը: Թե որքանով է «Համլետը» պայմանավորված նախընթաց մշակութային իրադարձություններով, քիչ բան է հայտնի: Ուսումնասիրողները նշում են միայն, որ «Համլետի» սյուժեն յուրացվել է Սաքսոն Քերականից, Բելֆորեից ու Քիդից: Իրականում ողբերգությունն ավելի խոր արմատներ ունի:

Գիտենք, որ Շեքսպիրն իբրև իր երկի հիմք է ընտրել Քերականի «Վարք դանիացվոց»-ը՝ բազում գործող անձանցով, սյուժետային գծերով, օգտվել է Բելֆորեի լրացումներից ու հավանաբար Քիդի «Նախա-Համլետից», բայց,

այդուհանդերձ, նշմարվում է «Համլետի» կապը անտիկ դասական ողբերգության հետ:

Հայտնի է, որ Շեքսպիրի ժամանակ Անգլիայում ընդունված էր եսքիլոսի, Սոփոկլեսի և Եվրիպիդեսի ողբերգությունների մեկնությունը: Բնական է թվում, որ անգլիացի դրամատուրգին հետաքրքրելու էր Օրեստեսի պատմությունը, որ սպանում է իր մորը՝ Կլիտեմնեստրային և նրա սիրեցյալին՝ Էգիսթոսին, հոր վրեժն առնելու համար: Ակնհայտ է հին Միկեննում տեղի ունեցածի և Էլսինոնում կատարված ողբերգության նմանությունը:

Եսքիլոսի, Սոփոկլեսի ու Եվրիպիդեսի ողբերգությունների հիմքում ընկած է Օրեստեսի մասին միջը: Ընդ որում՝ երեք ողբերգություններում էր Օրեստեսի բարեկամն է Պիլադեսը: Ամենացայտունը, սակայն, Եվրիպիդեսի հերոսն է, որ հանդես է գալիս իբրև Օրեստեսին հավասար կերպար:

Орест

О, мой Пилад, для бедного Ореста

Ты первый и последний друг...

один

Ты от меня не отвернулся.

(Еврипид. Электра. 94 – 98)

կամ հետազայում «Օրեստես»-ում.

Орест

Не может быть! Пилад? О, меж людей

Милей мне нет создания...

(Еврипид. Орест. 782 – 783)

Հիշենք ընկերոջն ուղղված Համլետի խոսքը.

Համլետ

Քանզի դու հավետ մի մարդ ես եղել,

Որ ամենայն ինչ կերլով հանդերձ՝ ոչինչ չես կրում

Եվ բախտի ամեն վարձն ու հարվածը

Ընդունել ես միշտ միահավասար շնորհակալությամբ:

Օրհնյալ եմ նրանք, որոնց մեջ արյունն ու դատողությունն

Այնպես համաչափ զուգախառնված են,

Որ լույ չվի չեն բախտի մատերին,

Որ ինչպես ուզի, վրան նվագի:

Տուր ինձ այն մարդը, որ իր կրքերի գերին չլինի.

Եվ ես սրտիս մեջ տեղ կտամ նրան, սրտիս սրտի մեջ,

Ինչպես այժմ քեզ... (III, 2)

Այսպիսով Շեքսպիրը, ողբերգություն ներմուծելով բացարձակորեն նոր հերոսի՝ Յորացիոյին, ում խնդիրն էր հաճախ գալ անտիկ պարերգչախմբի դերով, լիովին կարող էր հենվել Օրեստես-Պիլադես տանդեմի վրա: Այս դեպքում սպանված հոր զավակի՝ Օրեստեսի փոխարեն Յամլետն է, իսկ Պիլադեսի փոխարեն՝ Յորացիոն:

Ինքնին հասկանալի է, որ այս տեսակետը պահանջում է առավել հիմնավոր ուսումնասիրություն: Սակայն առաջին հայացքից իսկ նկատելի են շեքսպիրյան «Յամլետի» անտիկ արմատները:

Այժմ դիտարկենք այն հարցը, թե ինչպես գործնականում, այսինքն թատրոնում, կարելի է կիրառել այս տվյալները: Կարելի է ամեն ինչ թողնել նույնությամբ և չդիմել նոր մեկնությունների: Թվում է, սակայն, որ բերված տվյալների լույսով ողբերգությունը կդառնա առավել ընդգրկուն: Այս դեպքում Յամլետի ու Յորացիոյի ամեն մի երկխոսություն ձեռք է բերում այլ իմաստ:

Յորացիոյի կերպարը իբրև պարերգչախմբի կորիֆայոս, մեր կարծիքով էլ ավելի է ընդգծում ներկայացման մոնումենտալությունը: Բեմում հին հռոմեական պոետ Յորացիոսի և պարերգչախմբի առկայությունը ողբերգությանը հաղորդում է ոչ միայն Վերածնության, այլև անտիկ դարաշրջանի հմայք ընդգծելով մեծ անգլիացի դրամատուրգի հանճարն իր ողջ ընդգրկամամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Еврипид. Пьесы. М., Искусство, 1960.
2. Шекспир У. "Трагическая история о Гамлете, принце Датском". Перевод М. Лозинского. М., 1960
3. Ярхо В. Н. Древнегреческая литература. Трагедия. М., 2000.

Interpretation of the image of Horation as a leader of the ancient Greek chorus

In this article Horatio's role from Shakespeare's drama <<Hamlet>> is being studied. It should be noted that none of the Shakespeare's predecessors had a hero whose role would be to pass on to the next generations the tragedy of the Ellsinore castle. This brings forth the version that Horatio takes up the role of the chorus from the ancient Greek chorus.